



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2017 թվականի թիվ 162-Ա

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԵՐԱՍԻՄ ԹԻՐԱՔՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, հիմք ընդունելով Գերասիմ Թիրաքյանի հետ 2016թ. նոյեմբերի 14-ին կնքված աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա/ ենթակետը

ո ր ո շ ու մ եմ.

1. 2017 թվականի օգոստոսի 25-ից լուծել «ՀՀ Տավուշի մարզի Խաշթառակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գերասիմ Թիրաքյանի հետ 2016թ. նոյեմբերի 14-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ.ԱՐՈՎՅԱՆ

2017թ. օգոստոսի 25  
ք. Իջևան